ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավագյան,

Ի պատասխան Ձեր 13.03.2026թ. գրության՝ տրանսպորտային վիճակի բարելավման նպատակով տրանսպորտի վարչության և ճանապարհային ոստիկանության ղեկավարների (կամ ներկայացուցիչների) հետ աշխատանքային հանդիպում կազմակերպելու վերաբերյալ, տեղեկացվում է, որ ճանապարհային երթևեկության կարգավորման և խցանումների հաղթահարմանն ուղղված առաջարկությունները (կարճաժամկետ և միջնաժամկետ) քննարկվում են փոխվարչապետի գլխավորությամբ գործող միջգերատեսչական աշխատանքային խմբի կողմից:

Հաշվի առնելով հետագա քննարկումների արդյունավետ իրականացման անհրաժեշտությունը՝ առաջարկվում է տրանսպորտային վիճակի բարելավմանն ուղղված առաջարկությունները ներկայացնել գրավոր:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ